ինչպես Լեռնային Ղարաբաղում, հայ վարպետների ձեռfով: Շենքը նրանց մեջ ունի միայն ղարադամ անունը։ Մասերին տալիս են տարբեր անուններ, այսպես, Գեղի Թրքաբնակ գյուղում— սյանը՝ դիրäf. սրճաfարին՝ դիրäfդաշ, առաջին հարկի հաստ գերաններին՝ թիգ, մնացածներին՝ միլ, ծածկի համար կիսագերաններին՝ տըլակօճէrին՝ դօշամա. սրանց վրա գալիս է թախտա՝ փարդու, ապա ջարչ՝ ծղոտ, բաջա՝ յէrթիկ, ճöirթ, ճէrթ, պատrճան՝ թախճա, օջախ՝ պադ, ծըլfատէղ՝ յուfայ-աղաջ:

Հացատօնի ներfին կահավօrումը, որը կրկնվում է նաև fըrատակի մեջ, ավելի քան պարզ է։ Կարևոր նշանակություն ունի թօrէնը, որը սովորաբար շինվում է հացատօնից դուրս, հաճախ սըrահում և նույնիսկ առանձին շենքում։ Ներսում շինված թօrէնը չի լինում շատ խոր և թաղվում է հատակի մեջ կենտրոնական օջախից հեռու, պատերից մեկին ավելի մոտիկ, աշխատելով, որ պռունգը լինի մի փոքր վեր ելած, բայց անցուդարձին չխանգարի։ Շինողները գլխավորապես փորձված կանայք են։ Հօrի մեջ կանգնած՝ նրանք վեր են բարձրացնում թօrէնի կօղէrը՝ կավե հաստ կլոր շերտեր իրար վրա շարելով և երեսը հարթեցնելով[18]։ Թօrէնի ստորին մասն ավելի մեծ տրամագիծ ունի, քան թե պռունգը: Թօrէնի կողի ստորին մասում, հատակի մակերեսին հավասար մի տեղ բացվածք է թողնվում և աղեղնաձև օղակավորվում։ Այդ ծակը կոչվում է fուrակ, որ ունենում է մոտ 30 սմ բարձրություն և 20 սմ լայնություն։ Քուrակից հեռանում է թեք ուղղությամբ մի խողովակ— սöնդու, որի մյուս ծայրը դուրս է գալիս գետնի երեսը սովորաբար հենց շենքի մեջ, երբեմն էլ շենքից դուրս դեպի սհարը: Խողովակի այս ելքը օղակավորված է կավե շրջանակով 5—6 սմ հաստությամբ և 15—20 սմ տրամագծով։ Դա սöնդուի ակն է։ Սöնդուի միջոցով միշտ թարմ օդ է մտնում թօrէնը: Երբ կրակը բորբոքվում՝ ածուխի է վերածվում, ակը մի շորով խցանվում է, օդի ներթափանցումը վերջանում է և կրակը թօrէնի մեջ ավելի երկար է պահպանվում։ Սա ամբողջ Հայաստանում, Արևելյան Վրաստանում, Ադրբեջանում և առհասարակ Առաջավոր Ասիայում, մինչև Փոքր Ասիայի արևմտյան շրջանները տարածված միջգետնային թօնիrն է իր էական մասերով, բոլոր այդ վայրերում կրկնվող։

Տան մեջ հորած թօrէնը ծառայում է ոչ այնքան հաց թխելու, որքան ձմեռը կերակուր պատրաստելու և տունը տաքացնելու համար։ Ձմեռը նրա վրա դրվում է փայտե fնirուսին[19], աթոռ կամ քառակուսի կարճլիկ սեղան, որի վրա ձգվում է լայն վերմակ, փալաս կամ ջէջիմ: Ընտանիքի բոլոր անդամները նրա շուրջն են նստոտում գետնին փռած թաղիքների կամ կարպետների վրա և ծածկոցի եզրերը ոտների և կրծքերի վրա քաշած՝ տաքանում, կռնակները սենյակի ցուրտ օդի ազդեցությանը հանձնած։ Գիշերն անկողինները այնպես են փռում, որ վերմակներն ամբողջովին մնան fնirունւ ծածկոցի տակ[20]։ Անցյալում գիշերը հացատօնը լուսավորվում էր ձեթի կանթեղով կամ կավե ճրագով, որը դրվում էր կամ պատի մեջ հատկապես այդ նպատակով թողած խորշում, կամ փայտե ճրագակալի վրա, իսկ ձմեռը՝ fնirունւ վրա։ Ճրագի մեջ կամ ճարպ էր լինում, կամ ձեթ, կամ Բաքվից ուղտերով բերված սև նավթ։ Արդեն վաղուց դրանց դուրս է մղել նավթի լամպը, իսկ այժմ շատ գյուղե-

18 Տե՛ս վարը՝ «Կավագործություն», էջ 256։

19 Արաբերեն—kürsü—աթոռ։

20 Հմմտ. **Григоров Н.**, Село Татев, СМОМПК, вып. XIII, отд. I, էջ 73—74։